



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ
Western Diocese of the Armenian Church of North America

**ԵԿԵՂԵՑԻ ՅԱՃԱԽԵԼՈՒ
ՎԱՐՈՒԵԼԱԿԱՐԳԸ**



**CONDUCT WHILE
ATTENDING CHURCH**

**Burbank
2022**

Պատրաստեց՝
Գեորգ սարկաւազ Գեորգեան

A work by
Deacon Gevork Gevorkian

ԱՂՈԹՔ՝ ԵԿԵՂԵՑԻ ՄՏՆԵԼԻՍ

ԱՌ ԴՐԱՆՆ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Գրաբար՝

Տաճար Աստուծոյ եւ բնակարան Սուրբ Զոգոյն, ի քէն սուրբ աւագանան կոչեաց յորդեգրութիւն Զօրն Երկնաւորի: Այսօր ի քեզ կամեցաւ պատարագել Գառն անարատ: Եւ ես դիմեալ եկի առ դուրս քո. եւ աղաչեմ զքեզ, մաքրեա զիս վերստին լուացմամբ եւ սրբեա ի մեղաց եւ արա արժանի մտանել առաջի սրբոյ սեղանոյդ յերկրպագութիւն: Ամէն:

Աշխարհաբար՝

Տաճար Աստծո եւ բնակարան Սուրբ Զոգո, սուրբ աւագանի (մկրտութեամբ) Քեզանից կոչուեցի Երկնաւոր Զօր որդեգիր դառնալու: Այսօր Քեզ մեջ կամեցաւ պատարագուել (Աստծու) անարատ Գառը: Եւ ես այսօր եկել եմ Քո դուռը եւ աղաչում եմ Քեզ, մաքրիր ինձ նոր լուացմամբ եւ սրբիր մեղքից եւ արժանի արա Քո սուրբ սեղանի առջեւ երկրպագութիւն մատուցելու: Ամէն:

Սբ. Յովնան Ոսկեբերան

ԵԿԵՂԵՑԻ ՅԱՃԱԽԵԼՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԱՐԳԸ

Իւրաքանչիւր քրիստոնեայի պարտքն է յաճախել եկեղեցի, յատկապէս կիրակի եւ տօն օրերին՝ մասնակցելու Սուրբ Պատարագի արարողութեանը: Եկեղեցին՝ «Աղօթքի տուն» է, եւ խիստ կարեւոր է համապատասխան վարքագծի կանոնների պահպանումը: Եկեղեցում Աստծու սուրբ ներկայութեան գիտակցութիւնը բոլորիս, անկախ տարիքից, պէտք է թելադրի զուսպ, պատշաճ կեցուածք: Եթէ որեւէ աշխարհիկ հաստատութիւն այցելելիս պահանջում է վայելուչ վարքագիծ, պատշաճ արտաքին, ապա որքա՛ն առաւել «Աստծու Տուն»՝ Եկեղեցի մտնելիս պէտք է հետեւել որոշ կանոնների, որովհետեւ սրբազան Տաճարը Տիրոջ բնակավայրն է: Այդ կանոնները մի շարք պարզ առաջարկութիւններ են, որոնց իմացութիւնը եւ իրականացումը օգնում են ճշտութեամբ պաշտպանել ծառայութիւնը՝ առաւելագոյն օգուտ քաղելու համար: Այստեղ կարող էք գտնել մի քանի առաջարկութիւններ, որոնց կատարումը թոյլ է տալիս, որպէսզի հաւատացեալն իր ժամանակը Տիրոջ առջեւ անցկացնի ակնածանքով եւ յարգանքով:

Եկեղեցում պատշաճ պահուածքի ամփոփուած կանոններն ու առաջարկութիւնները հետեւեալն են.

- Եկեղեցի պէտք է մտնել խաչակնքուելով, անաղմուկ, զգոյշ քայլերով, պէտք է պահպանել լռութիւն, բարձրաձայն չաղօթել ու տեղից տեղ անցնել:

- Երգեցողութեանը մասնակցելիս պետք է մեղմ ձայնակցել, կարդալն ու երգելը պետք է լինի հևարաւոր ուշադրութեամբ եւ ակնածանքով, այլ ոչ թէ աղմուկ աղաղակով, առաւել եւս ծիծաղով եւ կատակներով:
- Եկեղեցական արարողութիւններին անհրաժեշտ է ներկայանալ ժամանակին եւ մասնկացել ամբողջապէս: Եթէ ուշանում էք արարողութեան սկզբին, ապա պետք է փորձել չխանգարել ուրիշների աղօթքին, վարուել հանգիստ եւ ակնածալից, լուռ տեղ գտնել տաճարում եւ կանգնելով Աստծու առջեւ՝ միանալ ընդհանուր աղօթքին: Իսկ եթէ եկեղեցում որեւէ ծանօթ էք տեսնում, ապա ողջունէք նրանց լուռ խոնարհումով՝ առանց միւսների հետ ողջագուրուելու եւ գրոյցի բռնուելու:
- Եկեղեցում արտաքին տեսքը շատ կարեւոր է բոլորի համար: Եկեղեցական արարողութեանց մասնակցութիւնը պարտաւորեցնում է, որ հագուստը լինի համեստ, եւ այնպէս, որ չշեղուի երկրպագուների ուշադրութիւնը: Եկեղեցի պետք է այցելել տղամարդուն եւ կնոջը համապատասխան վայելուչ հագուստով: Արգելում է եկեղեցի մտնել մարգահագուստով, կիսաբաց հագուստով, կիսավարտիքով, կարճ կիսաշրջագգեստով կամ կարճ տաբատով: Դիմահարդարումը պետք է զուսպ լինի, իսկ ոչ քրիստոնէական խորհրդանիշներով հագուստն անընդունելի է: Հաշիւ տանք մեզ, որ Աստծու ներկայութեան առջեւ ենք կանգնելու:
- Աղօթքի ժամանակ տղամարդիկ եկեղեցի պետք է մտնեն գլխաբաց, կանայք՝ գլուխները գլխաշորով ծածկած, ըստ Պօղոս առաքեալի հրամանի (տե՛ս Ա. Կորնթ. 11, 1-17):
- Եկեղեցւոյ արարողութեանց ընթացքում պետք չէ գլուխը շրջել, զննել երկրպագուներին, նրանց հարցնել

որելէ բանի մասին, մաստակ ծամել: Անյարգալից կեց-
ուածք է ոտքը ոտքին դրած նստելը, ձեռքերը կրծքի վրայ
խաչածնելը, ձեռքերը գրպանում պահելը:

- Հաւատացեալի հայեացքը հնարաւորինս պէտք է
դէպի Սուրբ Խորանը ուղղուած լինի: Աստուածային ծա-
ռայութեան ընթացքում հաւատացեալը պէտք է աղօթա-
կան կեդրոնացումով հետեւի ծեսի ընթացակարգին պա-
տարագի գրքով:

- Եկեղեցում պէտք է անջատել բջջային հեռախօս-
ները: Պէտք չէ խօսել հեռախօսով, իսկ անյապաղ անհրա-
ժեշտութեան դէպքում՝ ակելի լաւ է դրսում խօսել: Հարկ է
նաեւ խուսափել լուսանկար քաշելուց:

- Մոմավառութիւնը պէտք է անել արարողութիւն-
ներից առաջ կամ յետոյ, քանզի յարիր չէ մոմեր վառել Սուրբ
Խորհրդի կատարման ընթացքում՝ արարողութեան մաս-
նակիցներին չխանգարելու եւ ակելորդ իրարանցում չա-
ռաջացնելու համար:

- Եկեղեցի արգելւում է մտնել հարբած վիճակում
կամ որելէ թմրանիւթերի ազդեցութեան տակ լինելով:

- Խորհրդակատարութեան ընթացքում հարկ է ըստ
անհրաժեշտութեան ոտքի կանգնել: Սովորաբար, որպէս
յարգանքի եւ երկիւղածութեան նշան պէտք է ոտքի
կանգնել Տէրունական աղօթքի, Սուրբ Աւետարանի ըն-
թերցման, Հաւատամքի, Սուրբ Աստուածի, Ողջոյնի,
Սուրբ-Սուրբի, Սուրբ Երրորդութեան անունը լսելու ժա-
մանակ:

- «Հաւատամքի» ժամանակ լինել ձեռնամաձ՝ երկու
ձեռքերի ափերը կրծքավանդակի մօտ միացուած իրար:

- Քահանայի խաղաղութեան փոխանցման ժամա-
նակ կամ, երբ քահանան ներկաներին խաչակնքում է
խաչով, Աւետարանով կամ սկիհով, որի մէջ մեր Տիրոջ

Մարմինն ու Արիւնն է, պէտք է խոնարհուել եւ խաչակնքուել: Պէտք է խոնարհուել եւ խաչակնքուել նաեւ, երբ խնկարկում են քեզ, միայն թէ՛ պարբերաբար խաչակնքումը պէտք չէ վերածուի սովորական եւ անտարբեր մի շարժումների:

- Խաչը համբուրելիս ասում ենք. «Յիշեսցիր եւ զիս առաջի անմահ Գառիսն Աստուծոյ»:

- Հոգեւորականին հանդիպելիս պէտք է յարգալիր գլուխ տալ՝ թեթեւակի խոնարհուելով, եւ դիմել իւրաքանչիւր կարգի համար ընդունուած ձեւով. Վեհապառին՝ «Աստուած օգնական, Վեհափա՛ն հայր», Արքեպիսկոպոսին եւ եպիսկոպոսին՝ «Աստուած օգնական, սրբազա՛ն հայր», Վարդապետին եւ արեղային՝ «Աստուած օգնական, հայր սուրբ», քահանային՝ «Օրհնեցէ՛ք, տէ՛ր հայր»:

- Պատարագի ժամանակ Սուրբ Հաղորդութեան միջոցով ներկայ է հենց Ինքը՝ Յիսուս Քրիստոս, այդ իսկ պատճառով ներկաները «Ողջոյնի» ընթացքում, սուրբ համբոյրով կամ ուսահամբոյրով միմեանց ողջոյն են տալիս՝ ասելով. «Ողջոյն տուք միմեանց. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» (Ողջոյն տուէք միմեանց՝ Քրիստոս յայտնուեց մեր մէջ): Ի պատասխան՝ ողջոյն ընդունողն ասում է. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի» (Օրհնեալ է Քրիստոսի յայտնութիւնը):

- Սուրբ Հաղորդութիւն ստանալուց առաջ կանայք, որոնք շպարուած են, մաքրեն իրենց շրթներկը եւ ապա մօտենան Սուրբ Հաղորդութեան:

- Պէտք չէ լքել տաճարը ծառայութեան ավարտից առաջ եւ առանց արձակման աղօթքի, ու մանաւանդ, Հաղորդութիւն ստանալուց անմիջապէս յետոյ, քանի որ դա անյարգանք է սուրբ Խորհրդին: Կարելի է ժամանակից շուտ հեռանալ միայն թուլութեան, հիւանդութեան կամ լուրջ կարիքի պատճառով:

- Սուրբ Պատարագի ավարտին մօտենում ենք Աւետարանը համբուրելու՝ ասելով. «Մեղայ Աստուծոյ: Յիշեսցէ Տէր զամենայն Պատարագս քո եւ զուխտս քո ընդունելի արասցէ» (Թողյիշի Տէրը քո բոլոր ընծաները եւ ողջակէզներդ ընդունելի թող համարի):
- Եկեղեցուց պէտք է պատշաճ կերպով դուրս գալ, դէմքով դէպի Խորանը խաչակնքուելով, քանի որ Խորանը Աստծու բնակավայրն է. եւ վայել չէ մէջքով դարձած հեռանալ Աստծու տնից:

Յիշենք՝ այս ամենը սոսկ խորհուրդներ չեն, այլ Աստծուն մօտենալու եւ հոգեւոր լոյսով լցուելու հիանալի միջոցներ, քանզի եկեղեցուց պիտի դուրս գանք Աստուծային սիրոյ շնորհներով լցուած: Եւ ուրեմն՝ շնորհք, սէր եւ խաղաղութիւն բոլորին, ովքեր յաճախում են եկեղեցի:

PRAYER AT THE ENTRANCE OF THE CHURCH

Temple of God and dwelling place of the Holy Spirit, through the Holy Font of Baptism, You turned me into an adopted child of the Heavenly Father. Today, in You is willed that the pure Lamb be sacrificed to You, God. And today, I have come to Your door and ask of You, cleanse me with a new cleaning, wipe away my sins, and make me worthy to worship before Your Holy Altar. Amen. (St. John Chrysostom)

CONDUCT WHILE ATTENDING CHURCH

Each Christian has a duty to attend church, particularly on Sunday and feast days, to participate in the Holy Divine Liturgy. The church is a “house of prayer,” so it is strictly important to adhere to attendance rules. In church, the holy presence of God is known to us, independent of age; it is suggested to be restrained properly in posture. If worldly institutions require decent behavior proper appearance, it is imperative that when we enter “God’s Home,” to follow certain rules because the eminent Altar is the dwelling place of the Lord. Of these rules, some are simple suggestions, the knowledge of which helps in preserving the correct form of service. Here are a few suggestions for the faithful to make their time before the Lord pass with awe and respect.

The proper etiquette for behavior within the church is summarized in these rules and suggestions:

- You must enter the church by crossing yourself, calmly, with soft and quiet steps. You must maintain a solemn atmosphere, not pray loudly and not move from place to place.

- Participate in the singing of the hymns with a soft voice. Reading and singing should enhance your attention and awe. Refrain from making noise, snickering, and joking.
- It is essential to attend church services on time and participate in their entirety. If you are late to the beginning of the service, please refrain from disrupting the prayers of others, stay calm and in awe. Find a quiet place in the sanctuary and stand in the presence of God, participating in the collective prayer. If you recognize someone in the church, acknowledge them with a quiet bow without engaging in conversation.
- In church, outward appearance is important for everyone. Attending church services demands that attire be modest so not to attract attention. You should attend church with appropriate men's and women's attire. It is forbidden to enter the church with athletic clothing, half-open clothes, undershirts, short skirts, or shorts. Makeup should be worn in modesty, and non-Christian symbols are forbidden. We must realize that we are standing in the presence of God.
- During prayer, men must enter the church without head covering, and women should have their heads covered according to Paul's command (see 1 Cor. 11:1-17)
- You should not look back or around during church service, nor examine others - their clothes or otherwise - and not chew gum. Sitting with legs crossed and hands folded or in pockets is disrespectful.
- The attention of the faithful must be focused on the Holy Altar. During the Divine Liturgy, the faithful should follow the service's prayers in the Liturgy book.
- In church, you must turn off your cell phone. Phone conversations in the sanctuary are not allowed. In case of an

urgent matter, phone conversations should be held outside. It is also important to refrain from taking pictures.

- Lighting candles should be done before or after the church service since it is not appropriate to light candles during the Liturgy as it will disturb the participants.
- It is forbidden to enter the church in a state of intoxication or under the influence of any drugs.
- During the Sacrament, it is necessary to remain standing. It is customary to stand out of respect and worship during the Lord's Prayer, the reading of the Holy Gospel, the Creed, during the singing of "Sourp Asdvadz," "Voghchoyn," "Sourp-Sourp," when hearing the name of the Holy Trinity.
- During Havadamk (The Creed), stand with your hands united in prayer, palm-to-palm before your chest.
- You must bow and cross yourself when the priest passes the "Khaghaghoutiun Amenestzun" (Peace unto All), when the priest blesses with a cross, when the Holy Chalice with the Body and Blood of our Lord is presented, and when you are being censed with the incense censor. Crossing one's self should be meaningful and done appropriately so as not to appear as a random or disorderly movement.
- When you kiss the cross during the Liturgy, you say, "Hishesjir yev zis araji anmah garinun Asdudzo" (Remember me before the immortal Lamb of God).
- When you meet with the priest, a simple bow of the head should be accompanied by the proper greeting for each rank. To the Catholicos "Asdvadz Oknagan, Vehapar Hayr" (God be your helper, Your Holiness), to the bishop or archbishop "Asdvadz Oknagan, Srpazan Hayr" (God be your helper, Your Eminence), to the monastic "Asdvadz Oknagan, Hayr

Sourp” (God be your helper, Holy Father), to the priest “Orhnetzek Der Hayr,” (Bless me, Father).

- During the Divine Liturgy (Badarak), the Presence of our Jesus Christ Himself is in the Eucharist, and therefore the faithful greet one another with a holy kiss or tapping shoulders during “Voghchoyn” saying, “Voghchoyn duk mimiyants, Christos I mej mer haydnetsav.” (Greet one another: Christ has been revealed among us!). Answer the greeting by saying, “Orhnyal eh haydnutiunun Christosi” (Blessed is the revelation of Christ).
- When receiving communion, women should wipe off any lipstick from their lips.
- You should not leave the sanctuary early before the prayer of dismissal is given. Avoid leaving immediately after receiving Holy Communion because that is disrespectful to the Holy Altar. You may leave early due to medical reasons.
- After the Holy Badarak, we approach the Gospel and kiss it, saying, “Megha Asdoudzo. Hishetzeh zamenayn Badarakus ko yev zoukhds ko untuneli arastzeh” (May God remember and accept all of your offerings).
- It is important to exit the church properly and efficiently, with your expression facing the Holy Altar, crossing yourself, since the Holy Altar is a home. It is not appropriate to turn your head to the House of God.

Let us remember these are not mere advices, rather means by which to approach God and be filled with spiritual light, since we leave the church bestowed with God-loving graces. And so, grace, love, and peace be to everyone who attends church.